

10100

Punctum T. 6

891.99

P-95

ՅՈՎՅ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՔԱՐԵՎԱԿՆԵՐ



2003

89.99  
2-29

[1920]

891.99

р-95

46

ՅՈՎՅ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՔԱՐԵԱԿՆԵՐ



2445

1890

1.



ՀՐԱՏ. „Մ. ԷՓՐԻԿԵԱՆ ԵՒ ԸՆԿ.-ՆԵՐԻ“ ՀՐԱՏԱՐԱԿՈ. ԸՆԿ. — № 1.

००

Հարավանքա-ից

2.

Վերջացմաւ...

Կեանքըս մաշւեց, վերջացմաւ。  
 Ինչ յոյս արի՝ փուչ էլաւ,  
 Ինչ խընդութիւն՝ վերջը ցաւ։



3.

Հիմի բացել են հանդէս  
 Երգիչները իմ անտես。  
 Զան, հայրենի ծըղիդներ,  
 Ո՞վ է արդեօք լըսում ձեզ։



4.

Ետ չեկաւ...  
 Գընաց, գընաց, ետ չեկաւ,  
 Անկուշտ մահին, սև հողին  
 Գերի, մընաց, ետ չեկաւ:



5.

Ուր կորան...  
 Մօտիկներըս ուր կորան.  
 Ինչքան լացի, ձէն ածի՝  
 Զէն չի տըւին, լուռ կորան:



1917

6.

Թանի՛ մահ կայ իմ սըրտում,  
Թափուր գահ կայ իմ սըրտում.  
Զէ՞ դու էլ ես մահացու。  
Մահի ահ կայ իմ սըրտում։



Նոյեմբերի 7.

1917

7.

Ետ եկէք...  
Գարնան վարար գետ եկէք,  
Անցած օրեր, խինդ ու սէր,  
Դարձէք, իլար հետ եկէք։



Նոյեմբերի 11.

Հին աշխարհքը ամեն օր  
Հազար մարդ է մլտնում նոր,  
Հազար տարւան փորձն ու գործ  
Քսկըսւում է ամեն օր:



Ո՞վ իմանայ՝ ուր ընկանք,  
Քանի օրւայ հիւր ընկանք,  
Սէրն ու սիրտն էլ երբ չըկայ՝  
Կըրտակ ընկանք, զուր ընկանք:

10.

Քանի՞ ձեռքից եմ վառւել,  
 Վառւել ու հուր եմ դառել,  
 Հուր եմ դառել՝ լոյս տըւել,  
 Լոյս տալով եմ ըսպառւել:



11.

Ի՞նչքան ցաւ եմ տեսել ես,  
 Նենդ ու դաւ եմ տեսել ես,  
 Տարել, ներել ու սիրել,—  
 Վատը՝ լաւ եմ տեսել ես,



12.

Երազումըս մի մաքի  
Մօտըս եկաւ հարցմունքի.  
—Աստւած պահի ըստ որդին,  
Ո՞նց էլ համը իմ ձագի...



13.

Մընացել է բերդը մեզ,  
Յաղթանակի երթը մեզ.  
Անց են կացել՝ ով կային,  
Հիմի կրգայ հերթը մեզ:



14.

Ո՞նց է ժպտում իմ հոգին  
 Չարին, բարուն,— ամենքին.  
 Լոյս է տալիս ողջ կեանքիս  
 Ու էն ճամփիս անմեկին:



15.

Ի՞նչ ես թըռչում, խեղեսի սիրտ,  
 Հազար բանի ետև, սիրտ,  
 Ես ո՞նց հասնեմ հազար տեղ  
 Քեզ պէս թափով, թեթև, սիրտ:



16.

Եմ սուր, արթուն ականջում  
Մի խոր ձէն է միշտ հընչում,  
Անհուն, անքուն կարօտով  
Իրեն մօտ է ինձ կանչում:

०

Знаменити 26.

17.

Լինէր հեռու մի անկիւն,  
Լինէր մանկան արդար քուն,  
Երազի մէջ երջանիկ,  
Հաշտ ու խաղաղ մարդկութիւն:

1008 3993  
37806



18.

Մի հաւք զարկի ես մի օր.  
 Թըռաւ, գընաց վիրաւոր:  
 Թըռչում է միշտ իմ մըտքում  
 Թեղ արնոտ ու մոլոր:



Փետրւարի 2.

19.

Երկու շիրիմ իրար կից,  
 Յաւերժական լուռ դըրկից,  
 Թախծում են պաղ ու խորհում  
 Թէ՛ ինչ տարան աշխարհից:



Փետրւարի 4.

Ո՞վ է ձեռքով անում միվ,  
Հեռւից անթիւ ձեռքերով՝  
— Զան, հայրենի անտառներ,  
Դուք էք կանչում ինձ ձեր քով։



Աշնան ամպին ու զամպին,  
Մոլոր նըստած իր ճըմբին,  
Լօռու հանդում՝ մի արտուտ  
Նայում է դեռ իմ ճամփին։



22.

Կըլթացնում են, արտորում  
Արտումները արտերում,  
Թըռչում մանուկ հոգուս հետ,  
Ճախրում, ճըխում եթերում:

○○○

23.

Բերանն արնուտ Մարդակերը էն ան-  
բան  
Հազար դարում հաղիւ դառաւ Մար-  
դասպան.  
Զեռքերն արնուտ գընում է նա դեռ  
կամկար,  
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

—

24.

Մեռան, մեռան... Եւ, ահա,  
Խառնըւել են կեանք ու մահ.  
Չեմ հասկանում աշխարհքի  
«Կան ու չըկան» ես հիմա:



25.

Արևելքի եղեմներին իջաւ պայծառ  
իրիկուն,  
Հէքիաթական պալատներում ըսպա-  
սում են իմ հոգուն.  
Ի՞նչ եմ շինում էս ցեխերում, աղմու-  
կի մէջ վայրենի...  
Այս, թէ նորից գըտնեմ ճամփան, դէ-  
պի էնտեղ, դէպի տուն...



26.

Դու մի անյայտ թանաստեղծ ես, չը-  
տեսնըւած մինչ էսօր.  
Առանց խօսքի երգ ես թափում հայ-  
եացքներով լուսաւոր:  
Ես էլ, ասենք, զարմանալի Ընթեր-  
ցող եմ բախտաւոր,  
Որ կարդում եմ էդ երգերը էսքան  
հեշտ ու էսքան խոր:

○

27

Հէյ աղահ մարդ, հէյ անգոհ մարդ,  
միտքըդ երկար, կեանքըդ կարճ,  
Քանի քանիսն անցան քեզ պէս, քեզ-  
նից առաջ, քո առաջ.  
Ի՞նչ են տարել նըրանք կեանքից, թէ  
ինչ տանես դու քեզ հետ,  
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու  
օրւան էս ճամփէդ:

□ □

28.

Ազատ օրը, ազատ սէրը, ամեն բա-  
րիք իր ձեռքին,  
Տանջում տանջում, որոնում է ու  
դըժբախտ է նա կըրկին.  
Եյ անխելք մարդ, երբ տի թողնես  
ապրողն ապրի սըրտալի,  
Երբ տի ապրես ու վայելես էս աշ-  
խարհքը շէն ու լի:



29.

Քուն թէ արթուն՝ օրիս շատը երազ  
եղաւ, անցկացաւ,  
երազն էլ, նուրբ ու խուսափուկ, վը-  
ռազ եղաւ, անցկացաւ.  
Վըռազ անցան երազ, մուրազ, ու չը  
հասայ ոչ մէկին,  
Կեանքըս թեթև տանուլ տըւած գըրազ  
եղաւ, անցկացաւ:



10100

1919

30.

Ո՞ւ աշխարհքում ունեմ շատ բան.  
միտք եմ անում՝ Էս, թէ էն.

Մէջ տեղ կանգնած միտք եմ անում,  
չեմ իմանում՝ Էս, թէ էն.

Ասուած ինքն էլ, տարակուսած, չի  
հասկանում ինչ անի.

Տանի՛, թողնի՛, — որն է բարին, որ  
սահմանում, Էս, թէ էն:

000



